


5793

ԹՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՅԵ Ք

Յ

L. ԲԵՐԻԱ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՃԵՎԿԻԿՆԵՐԸ  
ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ



ԳՅՈՒՂՂԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

ЗКП | (47-92)

25 AUG 2005

F-55

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

L. FEBRUARY


# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼԹԵՎԿԻԿՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(ՀՈԴՎԱԾԸ ՏՊՎԱԾ Ե «ԲՈԼԵՐԵԼԻԿ»-Ի № 11-ՈՒՄ)

3974

30254

۲۹



930ъ9 ZPUS

1934

ՅԵՐԵՎԱՆ

101 MAR 2013

Թարգմ. Խմբագիր  
Ա. Աթ.Ա.ՑԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԴՐԵՆԱԼԻՆ ԱՆԴՎԵԼ ԱԿՏՈՒԹՅՈՒՆ  
ԱԿՈՂՆՑԱՅԻ



3152-91

Մրբազրիչ՝ Խ. Այվազյան  
Թույլատրված հ. Գլավիստի լիազոր № 283  
Հանձնվել է արտադրության 1934 թ. հունվարի 21-ին  
Ստորագրված ե տպագրելու 1934 թ. հունվարի 22-ին  
Հքառ. № 129, տիրած 5000, պատճեր № 482

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՋՐԱԾԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50



Խ. ԲԵՐԻԱ

Այսորվա Անդրկովկասն արագործն առաջ և ընթանում արդյունաբերության զարգացման և գյուղատնտեսության ոոցիալիստական վերակառուցման ուղղով:

Լենենի-Ստալինի ազգային քաղաքականությունն ապահովեց Ա.Սֆինչի սոցիալիստական աճումն ու ծաղկումը:

Ի՞նչ եր ներկայացնում Անդրկովկասն անցյալում: Լենինն Անդրկովկասն անվանում եր ավելի գյուղացիական յերկիր, քան Ռուսաստանը:

Այդ խոսքերով վորոշվում եր Ա.Սֆինչի դրությունն անցյալում, վորապես ցարիզմի տնտեսապես և կուլտուրապես չափազանց հետամնաց կիսազարութիւն:

Յերկրի ամենաճոխ հարստությունների՝ նավթի, մարդանեցի, պղնձահանքի գիշատիչ շահագործումը, գիոդալական-ճորտատիրական հարաբերությունների տիրապետությունը գյուղում, վորոնք հոգատարությամբ պահպանում եր ցարիզմը և վորոնք պահպանվել եյին համարյա մինչև խորհրդային իշխանությունը,—տհաթի ինչն և բնորոշում Անդրկովկասն անցյալում:

Ճնշելով մասսաների դժգոհությունը, ցարական կառավարությունն իր գործակալության միջոցով ամեն կերպ հրահրում եր ազգամիջյան պայքարը: Նրաքաղաքականությունը, վորի սկզբունքն եր «բաժանիր և իշխիր», նշվեց մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի խրախճանքով, արյան հեղեղներով:

Միասպետության ու կապիտալիզմի դեմ մղվառ  
սլայքարում, մեծապետական շովինիզմի ու տեղական  
նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում, ծանր ու պա-  
տասխանատու դեր վիճակից Անդրկովկասի բազմազգ  
պրոլետարիատին: Նա փայլուն եջեր գրեց հեղափո-  
խական շարժման պատմության մեջ: Նա պահպանում  
էր բոլոր ազգությունների բանվորների ինսերնացիո-  
նալ յեղացյալթյան տրագիցիաները: Նրա ծոցում  
թյուրեղանում եր Անդրկովկասի բանվոր պատակարգի  
մարտական ավտոնվարդը՝ նրա բոլշևիկյան այն կազ-  
մակերպությունները, վորոնք կազմավորվել և կոփ-  
վել Եյխ ընկեր Ստալինի անմիջական դեկավարու-  
թյամբ:

Նավթագործ Բագվի պրոլետարիատը միշտ զըտ-  
նվել և ցարական Ռուսաստանի հեղափոխական շարժ-  
ման առաջին շարքերում, իրավամբ գրավելով Անդր-  
կովկասի պրոլետարների առաջավոր ջոկատի առաջա-  
վոր դերը: Ընկեր Ստալինը՝ Թիֆլիսի յերկաթուղա-  
յինների 1926 թ. հունիսի 8-ի ժողովում իր արտասա-  
նած ճառում, հետեւալ ձևով բնորոշեց Անդրկովկասի  
բոլշևիկյան պողպոլիայի դպրոցը:

«Յես իրոք յեղել եմ և մնում եմ վորպես  
Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցների ա-  
ռաջավոր բանվորների աշակերտներից մեկը:  
Թուրլ տիեր դիմել անցյալին:

Յես վերհիշում եմ 1898 թվականը, յերբ  
առաջին անգամ ստացա յերկաթուղային արհես-  
տանոցների բանվորներից բաղկացած մի խմբակի  
Այդ 28-ը տարի առաջ եր . . .: Այդտեղ այդ ըն-  
կերների ըլջանում, այն ժամանակ յես ստացա  
իմ առաջին մարտական հեղափոխական մկրտու-  
թյունը: Այդտեղ այդ շնկերների ըլջանում, այն

ժամանակ յես դարձա՛ հերա՛ իովառթյան աշակերտը  
ինչպես ահսնում եք՝ իմ առաջին ուսուցիչներն  
եյին Թիֆլիսի բանվորները: Թուրլ տիեր այժմ  
իմ անկեղծ, ընկերական շնորհակալությունը  
հայտնել նրանց . . .»

Նավթարդյունաբերության բանվորների  
մեջ իմ կատարած յերկու տարվա հեղափոխա-  
կան աշխատանքն ինձ կովկացին, վորպես գործ-  
ուական մարտիկ և վորպես գործնական զեկա-  
վարներից մեկը: Մի կողմից շփումն ունենալով  
Բարգի այնպիսի առաջավոր բանվորների հետ,  
ինչպիսիք եյին Վացեկը, Սարատովկեցը և ուրիշ-  
ները և մյուս կողմից՝ բանվորների ու նավթար-  
դյունաբերողների միջև տեղի ունեցող ամենա-  
խոր կոնֆլիկտների փոթորկում, յես առաջին  
անգամ իմացա, թե ինչ և նշանակում զեկավա-  
րել բանվորների միծ մասսաները: Այնուեղ՝ Բազ-  
վում, այդպիսով յես ստացա իմ յերկըրդ մար-  
տական հեղափոխական մկրտությունը: Այդտեղ  
յես դպրձա հեղափոխության յենթավարպեար»:  
Ընկեր Ստալինի անունը սերտորեն շաղկապված և  
Անդրկովկասի հեղափոխական պայքարի ամրող  
ուստամության հետ, բոլշևիկյան կազմակերպություննե-  
րի պատմության հետ: Նա այդ կազմակերպություն-  
ների հիմնադիրն է: Նա կազմակերպում և ընդհատակյա-  
կոմիտեներ և ընդհատակյա տպարաններ Թիֆլիսում  
ու Բագվում: Նա զեկավարում և առաջին անկեղծ  
թուրցիկների հրատարակումը, առաջին քաղաքական  
գործադրությունը, ցույցերը: Նա վճռարար պայքար և մը-  
զումմենչեկիզմի գեմ, անողոքարար մերկացնումն և այն: Նա  
դիմում և Անդրկովկասի բոլշևիկներին հեղափոխական  
ահսությումը: Նա լինիսյան բոլշևիկյան կուսակցականու-

թյան ամենակայուն; ամենահավատարիմ ու ամենաշ-  
հետեղական գործադրողն ե: Երա ջանքերով նավթա-  
գործ Բագուն դարձավ բոլցեիզմի հզոր առաջապահ  
գերը Կովկասում, բոլցեիզյան կազմակերպություննե-  
րի անխօսուակելի պատվանդանը:

Մենակիլների, մուսավաթականների և դաշնակների ու նրանց նացիոնալիստական քաղաքականության տիրապետության շրջանը նույնպես նշվեց Անդրկովկասի ժողովուրդների աղքամիջան կոտորածության մեջ:

« . . . Նացիոնալիստական կառավարությունների գոյության յերեք տարին Վրաստանում (մենշևկեները), Ադրբեջանում (մուսավաթականները) և Հայաստանում (դաշնակները) զուր չափանիք նացիոնալիստական այդ կառավարությունները վարելով իրենց ազգային՝ քաղաքականությունը, զործելով աշխատավորների մեջ ազգեաթիվ նացիոնալիզմի վորով, բանը հասցըին վերջապես այնտեղ, վոր այդ փոքրիկ յերկրներից ամեն մեկը ըրջապատված եր նացիոնալիստական թշնամական մթնոլորտի մի ողակով, վորը զրկեց Վրաստանին ու Հայաստանին ուսասական հացից և Ադրբեջանի նավթից, իսկ Ադրբեջանին և Ռուսաստանին՝ Բաթումի վրայով ստացվող ապրանքներից։ Ել չեմ խոսում զի՞նված ընդհարումների (հայ-վրացական պատերազմի) և կոտորածի մասին (հայ-թուրքական կոտորածը), զորպես նացիոնալիստական քաղաքականության բնական հետեանքներու Զարմանալի չե, վոր նացիոնալիստական այդ թունավոր մթնոլորտում ինտերնացիոնալ հին կապերը կտրվեցին, իսկ բանվորների գիտակցությունը թունավորից նացիոնալիզմի թունով», — ասում եր

ըսկեր Մատլինն իր 1921 թ. հուլիսի 6-ի «Կոմունիզմի հերթական խնդիրները՝ Վրաստանում» ու Անդըր-կովկասում» վերնագրով իր զեկուցման մեջ. («Անդըր-կովկասյան ֆեդերացիայի տասը տարին», Զակինիգա, էջ 9—10, 1932 թ.):

Մենշևիկները, մուսավաթականներն ու դաշնակ-  
ները քայլայման հասցըին Անդրկովկասի ժողովրդա-  
կան անտեսությունը: Նավթի հանույթը 1913 թ. 446  
միլիոն փթէց 1920 թվականին իջել եր մինչև 175  
միլիոն փթի: Մարգանեցի ընդհանուր հանույթը 59  
միլիոն փթէց իջալ 7 միլիոն փթի: Բամբակի ցանքը,  
վորը 1913 թվականին հասնում եր 139 հազար հեկ-  
տարի, համարյա բոլորովին դադարեց և այն, և  
այն:

Առաջին համարության, սոցիալիստական շինարարության 13 տարին փոխեցին Անդրկովկասի կերպարանքը. Այն յերկերը, վորը վոչ մի խոշոր արդյունաբերություն չուներ բայց նաև վերդյունաբերությունից, ծածկվեց արդյունաբերական ոջախների ցանցով:

Նահանգական խուլ Յելիզավետպոլ քաղաքը դարձավ խորհրդային Գյանջան՝ տեքստիլ ու յուղագործական արդյունաբերական կենտրոն:

Փոքրիկ խուլ նուխի քաղաքը դարձավ մետաքս-  
արդյունաբերության կենտրոնը:

կենինականը վերածվեց մանածագործական կենտրոնի:

Վրաստանի նախկին Զեստափոնի ավանը յուրաց-  
նում է համամիութենական նշանակություն ունեցող  
հսկան՝ Փերբումարգանեցի գործարանը:

Տղվարչելի վայրի կիրճնեռում կառուցվում են  
ածխահանքեր։ Հանքագործները պատրաստ են վեր  
ուղարկել ածխի առաջին հանույթը։

Քութայիսը, Խմերեթիայի ազնվականության տյա նախկին միջնաբերդը, մի քաղաք, վորտեղ «Դրանատի» բառարանի համաձայն, 1909 թվականին կար ընդունելու 202 բանվոր, գարձել և Վրաստանի յերկրորդ արշույունաբերական կենտրոնը: Նա նավթարդյունաբերությանը մասակարաբում և բարիթ և գումրին, վորոնք փոխարժինում են Ամերիկայից ներմուծվող «Փլորիֆինը»: Նրա ձեռնաբերկություններում աշխատում է ավելի քան 30 հազար բանվոր: Քաղաքի շրջակայրում կառուցվել և և արդեն գործարկվել են Ռիսնի հիգրուելեկարակայանը (48 հազար կիլոմետր):

Յերեանը, վորը ցարական շրջանում հազիվ ուներ 30 հազար բնակիչ, վորոնք խեղզվում եյին նեղ ու փոշոտ փողոցներում, այժմ արդեն ունի մոտ 130 հազար բնակիչ, շրջապատվում են նոր գործարանների ողակով, կառուցվում են համամիութենական նշանակության ունեցող մի հսկա, սինթեթիկ կառուչուկի կուրինատը: Քաղաքն ասֆալտվում է: Նրա փողոցներով անցնում և արամվայը:

Թիֆլիսը, Կովկասյան փոխարքայության նախկին վարչական և առեարական այդ կենտրոնը, այն թիֆլիսը, վորտեղ բացի յերկաթուղային գլխավոր արհեստանոցներից այլ խոշոր ձեռնաբերկություններ չկային, դառնում են Բագվից հետո Սնդրկովկասի յերկրորդ արդյունաբերական կենտրոնը:

Սակայն առանձնապես ուժեղ թափով աճեց Բագուն, վորն ստեղծեց նոր նախթահանքեր, առաջավոր նավթարձական աեխնիկայի գործարաններ, վորտեղ կառուցված են որինակելի բանվորական ավաններ, նոր տների ամբողջ թաղեր, կուլտուրայի պարագաներ, վորը ծածկված եւ պարկերով ու պարտեզներով:

Անդրքերացիայի ամբողջ արդյունաբերության

անբանագն ավելի քան յերեք անգամ գերազանցում եւ մինչպատերազմյան արտադրանքից, իսկ ելեկտրոներգիայի քանակն ավելի քան 4 անգամ: Անդը կովկասը ցարական հետամիաց մի կիսազարութից, վորն անցյալում ավելի զյուղացիական եւ յեղեւ քան Ռուսաստանը, վերածվեց ինդուստրիալ ազրարային յերկրի:

Ելեկտրոֆիկացիան, նավթը, մարդանեցը, քիմիան, ածուխը, մեքենաշինությունը, տեքստիլ արդյունաբերությունը փոխեցին Անդրկովկասի կերպարանքը և արագացրին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: ԱՄՓԽՀՀ (Ադրբեջան) դարձավ Խորհրդային Միության բամբակագործական յերկրորդ բազան:

Վրաստանը, ՀամԿ(Բ)Կ-ի կենտրոնի վորոշմամբ, յերկրորդ հազարմյակում պետք եւ «հիմնականում բավարի ամբողջ Խորհրդային Միության թեյի որահանջը»: Այդ խնդիրն իրավոքներու համար մզկալ պայքարն զգալի հաջողություններ ունի: Յեթե 1928 թվականին կար ընդամենը 1900 հեկտար թեյի պլանացցիա, ապա 1933 թվականին թեյի պլանացցիաների տարածությունը հասավ 33.325 հեկտարի:

Մեծ հաջողություններով են ընթանում մերձարևադարձային, մասնավորապես ցիտրուսային տնկարաններն ընդարձակելու առաջադրանքի կատարումը, վորտվել և կուսակցությունը:

Շատ հաջող եւ զարգանում նաև ծխախոտի մշակույթը, վորը խոշոր աեղ և զրավում ԱՄՓԽՀՀ-ի գյուղատնտեսության մեջ:

Տնտեսական հաջողությունների հիման վրա, զյուղացիության քաղաքական ճշշտ գեկավարման հիման վրա, աճում եւ կուեկտիվացումը, ամբապնդվումը են

կոյանահետությունները՝ ունեոք կուլտուրական կյանչքի ուղի բանալով կոլտնտեսականների առջև:

Անդրկովկասը պըրիմիտիվ նահապետական հողագործության յերկրից վերածվեց առաջավոր գյուղատնտեսության մի յերկրի, վորը զինված և գյուղատնտեսական մեքենաներով, տրակտորներով, առաջավոր ազգոտեխնիկայով:

Անդրֆեդերացիայի համբավետություններում տընտեսական շինարարության հաջողություններին ուղղեցում են զգալի նվազումներ «ձեռվ ազգային և բովանդակությամբ սոցիալիստական» կուլտուրայի համար մրգող պայքարում: Իրականացվեց ընդհանուր տարրական ուսուցումը: Ընդարձակվում ե մանկական հիմնարկների, դպրոցների ու կուլտուրական ոջախների ցանցը քաղաքում և գյուղում: Տասնյակ ընդհանուր ու տեխնիկական բարձրագույն դպրոցներ վերջին տարիներս Անդրկովկասի արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանն արդեն տվել են ինժեներներ, ազգունումներ և ուսուցիչներ՝ տեղական աղջությունների բանվորներից, բանվորուհիներից, կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից: Ազգային լեզուներով թարգմանվում են մարքսիզմ-լենինիզմի կլասիկները: Ծաղկում ե արվեստը՝ գրականությունը, թատրոնը, կինոն, յերաժշտությունն ու նկարչությունը: Ամբանում ե Անդրկովկասի ժողովուրդների աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը:

\* \* \*

Անդրկովկասում սոցիալիստական շինարարության հաջողությունները հնարավոր դարձան միմիայն կուսակցության ազգային քաղաքականության ճիշտ կենսագործման հիման վրա:

1921 թվականին Լենինը «Դիբեկտիմսեր կովկասի կամունիստներին» նամակում գրում եր, թե Անդրկովկասի հանրապետությունների սերտ գաշինքը «կատեղծի ազգային խաղաղության մի որինակ, վորը չի տեսնված բուրժուազիայի օրոք և հնարավոր չե բուրժուական իրավակարգումն»: Լենինի այդ ցուցումը կենսագործիվեց այն անհաջա մարտերում, վորոնք մղվում ցյին նացիոնալիզմի և նացիոնալ ուկրոնիզմի դեմ՝ մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի անմիջական դեկապարագաների:

Խորհրդային Անդրկովկասը՝ հանդիսանալով Խորհրդային Մեծ Միության անրաժանելի մասը, խիստ կերպով տարրերվում ե մյուս յերկրներից իր բնական ույացմանների խայտարգետությամբ, իր ընդերքում թագնված հարստությունների հսկայական բազմազանությամբ, ազգային փոխհարաբերությունների ամենաբարդ միահյուսումով, իր սահմանամերձ դրության առանձնահատկություններով:

Անդրկովկասում բնակվում են տասնյակներով տարրեր ժողովուրդներ՝ վրացիներ, թուրքեր, հայեր, ուսւներ, քրդեր, հույներ, արխազներ, ոսեր, աջարացիներ, հրեաներ, թալիշներ, պարսիկներ, լեզգիներ և ուրիշ շատ ժողովուրդներ, բոլորովին տարրեր կենցաղաձևով: Ժողովուրդների լեզուների ու բարբառների բազմությունը հանդիսանում է բազմազգ Անդրկովկասուի այնպիսի առանձնահատկությունը, ինչպես նրա ժողովրդական տնտեսության բարդ կոմպլեքսը: Այդ բոլորը չի կարող վորոշ բարդություն չափել ԱՄՖՀ-ում կատարվող աշխատանքի պայմաններում, վորը պահանջում է հաշվի առնել այդ պայմանների առանձնահատկությունները:

Անդրկովկասայան ֆեդերացիան հանդիսանում է

Անդրկովկասի ժողովուրդների գործակցության այն ձևը, վորով ապահովում և յերկրի սոցիալիստական շինուարարության ճիշտ զեկավարումը և այդ բոլոր առանձնահատկությունների հաշվառումը:

Անդրկովկասյան ֆեղերացիան, վորը բաղկացած և յերեք հանրապետություններից (Վրաստան, Ադրբեյջան և Հայաստան), հանդիսանում և յեռանդամ ֆեղերացիա: Յերեք հիմնական հանրապետությունների մեջ մտնում են նաև հինգ ինքնավար հանրապետություններու մարզեր:

Անդրկովկասյան ֆեղերացիան ծնվել, աճել ու ամրապնդել և կատաղի գոտեմարտերի բանվելով նացիսակառակոնիզմի հետ, վորը փորձում եր վիճեցնել ֆեղերացիայի ստեղծումը, նրա քաղաքական ու տնտեսական ամրացումը:

Ընկեր Ստալինը 12-րդ համագումարում արտասանած իր ճառում, վոր խորը վերլուծման և յենթարկում ազդային հարցը ճիշտ լուծելու համար մղվաղ պայքարի խնդիրներն Անդրկովկասում, ասել են՝

«...Հարկավոր ե իրական սիստեմատիկ, անկեղծ, իսկական պրոլետարական ոգնություն ցույց տալ մեր կողմից կուլտուրական ու տնտեսական տեսակետից հետ մնացած ազգությունների աշխատավոր մասսաներին: Անհրաժեշտ ե, վոր բացի դպրոցներից ու լեզվից, ուսուական պրոլետարիատն ամեն միջոց ձեռք առնի, վորակեսզի ծայրակերներում, կուլտուրական տեսակետից հետ մնացած հանրապետություններում, —իսկ նրանք հետ են մնացել վոչ թե իրենց մեղքով, այլ այն պատճառով, վոր առաջ դրանց դիտում ելին վորապես հումքի աղբյուրներ, —ստեղծելու այնպիսի դրություն, վորակեսզի այդ հանրապետությունը

ներում կազմվեն արդյունաբերության ոչախներ» (Ստալին «Մարքսիզմը և ազգային-գաղութթային հարցը», էջ 117: (Կուսհրատ, 1934 թ.):

Պրոլետարական ոգնությունը հսկայական դիր խաղաց մեր յերկրի ինդուստրացման գործում, Անդրբեյջանի հանրապետությունների վորությունն ամրացնելու, Անդրբեյրացիան ամրապնդելու ասպարիզում: Անդրկովկասում առաջ յեկած արդյունաբերական ոջախաներում աճեցին պրոլետարների կազմեր տեղական բնիկ ապկություններից:

Այն գործոններից մեկը, վորոնք խոչնորո ելին հանդիսանում հանրապետությունների միացմանը և մի միություն կազմելու գործին, հանդիսանում ելին շոմինիզմը և նացիսակառակությունը:

Նույն ճառում ընկեր Ստալինն ասում եր՝

«...Յեթե Խորհրդային իշխանությունը չկարողանար Անդրկովկասում ստեղծել ազգային խաղաղության այնպիսի մի որպան, վորը կարողանար կարգավորել բազմութիւնն ու կոնֆլիկտները, մնաք կվերադառնայինք ցարկամի հպոխային կամ գաշնակների, մուսավաթականների ու մինչեիկների եպոխային, յերբ մարդիկ այրում ու մորթում ելին միմյանց» (Նույն աշխատությունը. էջ 119—120):

Այն ուղին, վորի կողմն ելին մղնում նացիսնալուկոնիստները, նշանակում եր «Կովկասի մեր ամբողջ քաղաքականության և Խորհրդային իշխանության անխուսափելի մահը»:

Անդրկովկասի բոլեկիները գլխովին ջարդ ու փշուր արին շովինիզմը, նացիսնալիզմը, նացիսնալուկոնիզմը, արոցկեզմը և հսկայական աշխատանք ծավալեցին Անդրկովկասի ֆեղերացիան քաղաքականաւ

պես ամրացնելու բնագավառում, առեղծեցին այն բուլը պայմանները, վորոնք անհրաժեշտ եյին տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման համար:

ՀԱՄԿ(թ) կ կենտկոմի իր 1929 թ. հոկտեմբերի 30-ի վորոշմամբ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առջև ինդիք դրեց՝ կենտրոնացնել իրենց ջանքերն «ազգային հանրապետությունների տնտեսական ու սոցիալստական շինարարության վրա, նրանց ինդուստրացման, գյուղատնտեսության տեխնիկական ու սոցիալական վերակառուցման վրա», առաջարկելով «ամրացնել Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական բազան, իրոք զեկավարել Անդրկովկասի ամրող տնտեսական շինարարությունը»:

ՀԱՄԿ(թ) կ կենտկոմը նշեց, վոր այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ ե միաժամանակ ծավալի «Անդրկովկերացիայի կազմի մեջ մտնող ազգային հանրապետությունների լայն ինքնազործունեյությունը և տընտեսական նախաձեռնությունը»:

ՀԱՄԿ(թ) կ-ի կենտկոմի այդ կարեռագույն ցուցումը գեկավար գերեկափի հանդիսացավ Անդրկովկասի կուսկազմակերպությունների ամրող աշխատանքի համար: Սակայն հետագայում Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները սխալներ թույլ տվեն ազգային հարցում, գյուղացիության հիմնական մասսաների քաղաքական գեկավարման հարցում: Զկար նաև կուսակցական կազմակերպության բոլշեվիկյան համախմբվածություն:

Անդրկովկասի տնտեսական ու կուլտուրական շինարարության գեկավարության տեղի ունեցած բյուրոկրատիկ կենտրոնացումն արտահայտում եր այն, վոր կուսկազմակերպությունները չգիտեյին գուգակցել Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական-քաղա-

քական զորության ամրացումը, ԱՄՖԽՀ-ի մեջ մտնող հանրապետությունների նախաձեռնության ու ինքնառագործունեյության առավելագույն ծավալման հետ:

Անսկզբունք խմբակային պայքարը, «ատաման-շչինան», մարդկանց բաշխումը վոչ ըստ գործարար սկզբունքի, կուսակցական կարգապահության և պատասխանատվության զգացմունքի անկումը, բնորոշում են գործերի գրությունն այդ շրջանում անդրկովկասյան կուսակցական կազմակերպության մեջ:

Կուսակցական զեկավարությունը թույլ տվեց մի շարք խոշոր խեղաթյուրություններ և «Ճախ» խոտորություններ գյուղացիական հարցում: 1931 թ. Անդրկովկասում, մանավանդ Վրաստանում, տեղի ունեցած սխալներն արտահայտվեցին մերկ վարչարարությամբ, կոլեկտիվացման ուղղած թվերի հետեւց ընկնելով և Խորհրդային Միության առաջավոր հացահատիկային շրջանների փորձը մեքենայորեն Անդրկովկաս տեղափոխելով: Այդ ամենապարզորդ կերպով վկայում ե, վոր այն ժամանակ Անդրկովկասի կուսկազմակերպությունները համապատասխան հետեւթյուններ չեյին արել Վրաստանի 1924 թ. դասերեց:

1924 թ., Մուկվայում, գյուղական բջիջների քարտուղարների խորհրդակցությանը, ընկեր Ստալինն իր յելություն քաղաքական ծրագիր տվեց Անդրկովկասի գյուղացիության ճիշտ զեկավարումը կազմակերպելու համար: Ընկեր Ստալինն ասում եր՝

«Մեզ մոտ թերթերում գրում են Վրաստանում տեղի ունեցած բուտափորական յելույթների մասին. դա ճիշտ ե, վորովհետեւ ընդհանուր առմամբ Վրաստանում ապստամբությունն արհետական եր, վոչ ժողովրդական: Սակայն մի քանի վայրերում, շնորհիվ կոմկուսի ու մասսայի



վատ կապի, մենչեւիկներին հաջողվեց ապստած-  
րության մեջ ներդրավիլ այդ գյուղացիներն  
մասսայի մի մասու Բնարաշ և, փոք այդ վայրերն  
տմենից ավելի յեն հաղեցված կոմունիստական  
ուժերով։ Այդ վայրերում համեմատաբար շատ  
ավելի կոմունիստ կա, քան մյուսներում։ Յեզ  
ահա հենց այդպի ևլ մարզիկ անոնեցին, չոեւ  
սառ, չէ կատեցին, փոք գյուղացիների մեջ խմա-  
րում կա, փոք գյուղացիներն ինչ փոք բանի պատ-  
րաստություն են տեսնում, փոք նրանց մեջ զըմ-  
գոհություն կա, փոք վերջինս կուտակվում և  
որեցոր, լակ կուսակցությունը վոչինչ չգիտեր  
դրա մասին . . .»։

«Ի՞նչպես կարող եր պատահել այդ անհեթե-  
թությունը։ Հենց այնպես, փոք կոմունիստաները չը-  
կարողացան լինինարար մոտենալ գյուղացիներին,  
վստահության մթնոլորտի փոխարեն ստեղծեցին  
փոխադարձ անվատահության մթնոլորտ և այդ-  
պիսով կուսակցությունը կարեցին անկուսակ-  
ցական գյուղացիներից»։

Անդրկովկասի կուսակցական կազմակերպություն-  
ների սխալների արմատն այն եր, փոք կուսակազմա-  
կերպությունները բավականաչափ չելին կապված  
գյուղացիներն մասսաների հետ և «զուրու յեկավ», փոք  
նրանք կարդած ելին անկուսակցական գյուղացիու-  
թյան արամագրություններից, խոհներից ու ակնկա-  
լություններից»։

Անդրկովկասի կուսակազմակերպություններն այդ  
սխալներն ուզգեցին միմիւյն շնորհիլ ՀամԿ(թ)կ կենակոմի և անձամբ ընկեր Ստալինի յևսանդուն  
միջամտության ու ողնության։ ՀամԿ(թ)կ կենակոմի  
1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումն Անդրկովկասի

բոլշևիկների համար հանդիսացավլ բոլշևիկյան գործու-  
ղության պատմական փաստաթուղթ՝ կատարված սը-  
խաներն ուղղելու համար մզվող պայքարում։

Փոխվեց Անդրկովկասի կուսակցական կազմակեր-  
պությունների գեկավարությունը։ Համ. Կ(թ)կ կենա-  
կոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումներն իրա-  
կանացնելու համար մզվող պայքարում համախմբվեցին Անդրկովկասյան բոլոր լավագույն բոլշևիկները։ Կուս-  
կազմակերպությունները մորիկեկացիայի յենթարկեցին  
իրենց ուժերը՝ համար տշխատանքի համար։ Կենակոմի վորոշումներն իրականացնելու համար, անողոք պայ-  
քար հայտարարելով ցուցամոլության դեմ, ճոռու  
շաղակրատության գեմ, և թեվքերը քշտած ձեռնամուխ յեղան մանրակրիտ առորյա աշխատանքի։

Ամրանում և մեր կապը մասսաների հետ։ Փոխ-  
վում և կուսակազմակերպությունների աշխատանքի վո-  
ճը։ Հսկայական աշխատանք և կատարվում հենց կու-  
սակցական կազմակերպություններն ամրացնելու, կու-  
սակցական կադրերը ճիշտ բաշխելու համար։ Այդ  
բոլորի հետեանքով Անդրկովկասի կազմակերպու-  
թյունն զգալի հաջողություններ ձեռք բերեց Համ.  
Կ(թ)կ կենակոմի վորոշումներն իրականացնելու գոր-  
ծում։

Պայքար մղելով կուսակցության հիմնական գծի  
համար, ընկեր Ստալինի ցուցումները կատարելու հա-  
մար, լինինյան ազգային քաղաքականության համար,  
պրոլետարական ինտերնացիոնալիզմի համար, Անդր-  
կովկասի բոլշևիկները, Վրաստանի, Ադրբեջանի ու  
Հայաստանի աշխատավորներն ստեղծեցին և ամրապն-  
դեցին Անդրկովկերացիան, իսկական ազգային խաղա-  
ղության այդ հզոր պատվանդանը, պրոլետարական  
հեղափոխության պողպատակուու առաջատար գիրքը  
Խորհրդային Միության արևելյան սահմաններում։

Բագվի նավթահանքերը, նրանց ներկա ժողովը՝ դական անտեսական հսկայական նշանակությունը և փայլուն ապագան, ամենավառ կերպով մարմնավորում են Անդրկովկասյան Ֆեդերացիայի բնական անսպառ հարստությունները:

Արևելքի սահմանագլխին, նոր առևտուրական ուղիւների խաչաձևեան պատմական կետում, յերեսը դարձրած դեպի ստրկացած ներքին հակասություններով բգկավող Արևելքը կանգնած է Բագուն, վորափս մի ապառաժ, վորափեն լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի փայլուն վկան:

Նավթը միշտ ել միջազգային ուժ և հանդիսացել, և Բագուն իր նավթի հսկայական հարստությամբ համեղ պատառ և հանդիսացել բոլոր ժամանակների ու ժողովուրդների նվաճողների համար, կապիտալիզմի գիշատիչների համար:

«Բագուն, իսկ Բագվում նավթ», — զրել ել իր ճաշնապահորդական հիշատակարանում հին արաբական աշխարհագրագետ Մասսուդին, վորն այցելել և Բագույի վրապական տարեգրությունից շատ առաջ:

«Այդ Բագուն հարուստ և հիմնալի վորակ ունեցող նավթով», — զրել ել Պետրոս Առաջինը, ուրվագետնով մի պլան սուսական զորքերի գեպի «սպասից հողը» կատարելիք արշավի համար:

Բագվի նավթային հարստությունները հայտնի են ամենահին ժամանակներից, սակայն դրանց արդյունաբերական լայն մշակումն սկսվեց կես դարեց քիչ ավելի առաջ:

Բագվի առաջին վիշտան կառուցվեց 60-ական թվականների վերջերին, սակայն միայն անցյալ դարի 90-ական թվականներին, յերբ խփեցին հզոր շատը վաճանակում ու Բիբի-Ելբաթում, սկզան

վեց Բագվի համաշխարհային հոչակը, նավթի այդ քաղաքի, բուրժուական թաղերի շացուցիչ հաբուության և բանվորական ավանների աղաղակող աղքա- տության այդ քաղաքի:

Ավելի քան 200 նավթային ընկերություն տիրություն ելին անում մինչ հոկտեմբերյան Բագվին նորելները, Մանթաշինները, Ռոտշլենները, Դուկասովները, Լիանովովները, Նաղիենները, Ասադուլակները, Մուխտարովները և այլն՝ միլիոնների կարողություն գիրեցին այդ նավթով: Դիշատիչ շահագործում, հանույթի ու փորելու պրիմիտիվ տեխնիկա, բարբուրուական մելոնկան, հողի բութ փորում՝ պարանին կախած սրածայր յերկաթով, ծանր աշխատանքը փորվող հորերում, ընդերքի շահագործման վոչ ու ացիտնալ մեթոդներ, — ահա թե ինչն ե բնորոշ նորելների, Մանթաշինների և ուրիշների նավթահանքերի համար:

Հեղափոխությունը Բագուն ի սպաս դրեց սոցիալգոմի շինարարությանը:

Բագվի նավթագործների առջև, վորոնք 1920 թվականին վանդեցին նավթարդյունաբերողներին, մուսավաթական թափթափուկներին ու անգիտական ինտերվենտներին, ծառացան հսկայական խողիբնակեր՝ տիրապետել նավթային անտեսության ղեկավարությունն ու տեխնիկային և նավթարդյունաբերությունը դարձնել յերկը ժողովրդական անտեսության առաջականացնելու համար:

Արդեն 1928 թվականին Բագուն համարյա բոլոր ովին կորցրեց իր հին կերպարանքը՝ Աղնեգիթի լավագույն ինժեներները յեղան Ամերիկայում և այսակից բերին նավթի արտադրության կազմակերպման ամենաարժեքավոր փորձառությունը: Նավթահանքերում յերկացին առաջին խորը պոմպերը, շրջապառյա

փորված առաջին հորերը: Ակսվեց նոր փորվող հորերի ելեկտրիֆիկացիան, աճեցին նավթ մշակող նոր հզոր ձեռնարկություններ:

Համեմատած մինչպատերազմյան՝ 1913 թվականի հետ, շահագործվող հորերի թիվը համարյա յեռապատկեց: Նավթահանքերն ամբողջովին անցան շրջապտույտ փորման ու փակ շահագործման, ծավալվեց նոր նավթավայրերի ու իորը նավթաշերտերի մշակումը:

Այժմ Ադրբեջանի նավթարդյունարերությունը համարյա վոչ մի ընդհանուր բան չունի նախկին կապիտալիստական նավթահանքերի հետ: Խորհրդային իշխանությունը համարյա ամբողջովին նոր ստեղծեց յերկրի առաջավոր նավթարդյունարերությունը: Դրան մենք հասանք չնորհիվ այն հանգամանքի, վոր Համ. Կ (բ) Կ-ի կենտրոմը և անձամբ ընկեր Ստալինը սիստեմատիկարար գեկավարել են նավթարդյունարերությունը, ոգնել են նրան աշխատանքում:

Նավթագործներն առաջին հնգամյակը կատարեցին յերկու և կես տարում:

Յերկրորդ հնդամյակը բազվեցիներն սկսեցին հաւաքութիւն հետագա բարձրացումով և նոր արշավալ գեպի քիչ հետազոտված նավթավայրերը: Համաշխարհային արդյունարերությանն անծանոթ տեսմով, մի տարուց պակաս ժամանակամիջոցում, ստեղծվեցին յերկու խոշորագույն նավթահանքեր՝ Լոկ-Բատանն ու Կալան, և մի շարք նոր տարածություններ պատրաստվեցին շահագործման համար: Առաջ գնաց նավթահանքերի տեխնիկական գինվածությունը:

Յերկրորդ հնդամյակի առաջին տարվա պլանն Ադրբեյջանի գերակատարեց (15.3.25 հազար տոնն):

1934 թ. պլանը կազմում և 22 միլիոն տոնն,

այսինքն յերեք անգամ՝ ավելի, քան տավիս եր Բազում պատերազմից առաջ և 46 տոկոս ավելի 1933 թ. պլանից: Այդ պլանն անպայման իրական և կազմվել և Բազի բոլոր ամենահարուստ հնարավորությունները հաշվի առնելով: Սակայն հանույթի այդ պլանը կատարելու համար, անհրաժեշտ և, վոր նավթահանքերի ապարատն աշխատի հստակ ու ժամացույցի պես կանոնավոր, անհրաժեշտ և ել ավելի արագ տուած մղել նավթային անտեսության ակինիկական վերակառուցումը և բարեկավել փորելու և շահագործման մեթոդները:

Ներկայումս նավթահանքերի հետ մնալը նոխ և առաջ վկայում է, վոր Ադրենֆելը թույլ և նախապատրաստիկ պայքարելու 22 միլիոն տոնն նավթի համար և նրա ապարատի աշխատանքը զես լիովին համապատասխան չի գարձած տնտեսական նոր հսկայական խնդիրներին:

Համկ(բ)կ Անդրյերկոմը վորը լարված հետեւում և նավթահանքերի աշխատանքին և ոպերատորիկ կերպով ոգնում և նրանց դժվարությունները հաղթահարելու, Ադրբեյջանի կոմիտասի կենտրոնի ու Բազի կոմիտեյի հետ միասին մշակեց Ադրենֆելի վերակառուցման մի ծրագիր՝ 22 միլիոն տոննի պլանը կատարելու համար: Վերակառուցման այդ ծրագրին հավանություն ավելց Համկ(բ)կ կենտրոնը:

Համկ(բ)կ կենտրոնի վորոշումն արձանագրում է, վոր «Ադրենֆել և Բազի կուսակցական կազմակերպությունը, շնորհիվ նավթարդյունարերության ակինիկական զինվածության բարձրացման, զեկուար աշխատանքի համար մասնագետների յերիտասարդ կալբեր առաջ քաշելուն, շնորհիվ այն հանգամանքի, վոր բանվորներն ու ինժիներատեխնիկական աշխա-

առողջները մոքիլիզացիայի յենթարկվեցին նավթի համար պայքարելու, շնորհիվ նախկին Ազնեփթ միավորան փոքրացման, վոր կատարվեց կենտրոնի վորոշումների հիման վրա, զգալի հաջողություններ ձեռքբերեցին»: Մատնանշելով այդ հաջողությունները (հանույթի աճումը համեմատած անցյալ տարվա հետ 46,5 առկոսով և փորման աճումը՝ 67,5 առկասով), Համեր(բ)կ կենտրոնի ուրվագծեց Բագվի նավթահանքերի հասագա վերելքի ուղիները:

Մեր խնդիրներն են՝ վճռաբար առաջ մղել փորելու դործի ամբողջ ճակատը՝ Ազնեփթի ամենից ավելի հետ մնացող այդ ճակատամասը, ավելացնել փորելու արագությունը և բարելավել նրա վորակը, ել ավելի արմատացնել առաջավոր տեխնիկան նավթային տնտեսության մեջ, կազմակերպել նավթագործական սարքավորման նորագույն տեսակների մասսայական արտադրությունը, ավելի լավ ոգտագործել գոյություն ունեցող տեխնիկական ուսուրանուրը, ուժեղացնել կուսակցական մասսայական աշխատանքը նավթահանքերում և ավարտել կենտրոնական ու նավթահանքային ապարատների աշխատանքի վերակառուցումը:

Ազնեփթի վերակառուցման հիմնական խմաստն են ավելի ճիշտ կառուցել նավթահանքային վարչությունը, ամրացնել շահագործման ու փորման խմբակները, դարձնել նրանց լիարյուն տնտեսական ողակներ, ավելի համարձակորեն փոխազդել մասնագետներին ապարատներից դեպի խմբակները, դեպի արտադրություն, բարձրացնել փորման վարպետի վերն ու պատասխանատվությունը, դարձնելով նրան փորվող նավթահորի խմբական տերը:

Անդրկովկասի բոլշեվիկները, Բագվի բոլոր նավթագործները, զիտակցում են այն մեծագույն պատաս-

խանատվությունը, վորը զրված է նրանց վրա 22 միլիոն տոնն նավթի հանույթի պլանով, և մոքիլիզացիայի յեն յենթարկում բոլոր ուժերը կուսակցության այդ առաջադրանքը կատարելու համար:

Մեր առջև խնդիր է դրված՝ վաչ միայն կատարել հանույթի 1934 թ. պլանը, այլև պայմաններ նախապատրաստել նավթարդյունաբերության հետագա աճման համար:

Ապշերոնի վազվա որը պետք է նախապատրաստել այսոր—դրա համար ևս աշխատում են Բագվի բոլշևիկները և Բագվի բոլոր նավթագործները:

Ապշերոնը փայլուն հեռանկարներ ունի: Մենք ունենք ամենահարուստ նավթաբեր ֆոնդեր, վորոնք կարող են մի շարք հնգամյակների ընթացքում ապահովել յերկիրը նավթով:

